Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանը հայտարարում է ԵՄ-ի հետ համագործակցության գերակա ոլորտների վերաբերյալ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Մրցույթի հայտարարություն

Հայաստանի հետպատերազմյան և հետընտրական իրողությունները պահանջում են ներկա հանգամանքների ազնիվ, անաչառ և համակողմանի գնահատում: Ստեղծված իրավիճակն իր ազդեցությունն է թողնում նաև մարտի 1-ից ամբողջովին ուժի մեջ մտած ՀՀ և ԵՄ միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրականացման պայմանների ու հնարավորությունների վրա: Հայաստանի զարգացման, արդիականացման և երկկողմանի համաձայնագրի դրույթների պատշաճ իրականացման համար մթնոլորտն այժմ այլ է. փոխվել են բարեփոխումների իրականացման երաշխիքները:

Վերջին գրեթե երեք տարիներին ստեղծված հնարավորությունները չօգտագործվեցին արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Հայաստանի արժեքային, քաղաքական, տնտեսական, հասարակական և սոցիալական ճգնաժամերը վերահաստատեցին տարբեր ոլորտներում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ բացերը և կառավարման խնդիրները: 44-օրյա պատերազմից հետո հատկապես տեսանելի դարձան ժողովրդավարական ինստիտուտների ճգնաժամը և հանրային վստահության նվազման ու ժողովրդավարական արժեքների նենգափոխման միտումները՝ վտանգի տակ դնելով Հայաստանի և ԵՄ միջև գլխավոր փաստաթղթի արդյունավետ և հաշվետու իրականացումը:

Հաշվի առնելով իրավիճակը՝ քաղաքացիական հասարակությունը մտահոգված է համաձայնագրի իրականացման հեռանկարով: Ուստի, անհրաժեշտ ենք համարում Հայաստանում տիրող իրավիճակի և համաձայնագրի դրույթների իրագործման վերաբերյալ **գիտելիքի ու հետազոտությունների վրա հիմնված արձագանքների և գնահատականների ձևավորումը**: Հանրային կյանքի յուրաքանչյուր ոլորտում ԵՄ-ի կողմից աջակցությունը պահանջում է Հայաստանի կառավարությունից տվյալ ոլորտի զարգացմանն ուղղված քայլերի հստակ ընկալում ու ներկայացում, որը միաժամանակ պետք է դառնա քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկման առարկա:

Տարիների ընթաքում Հայաստանի քաղաքացիական հասարակության՝ հանուն ժողովրդավարության, հաշվետու և թափանցիկ կառավարման, նաև մարդու իրավունքների պաշտպանության պայքարի հրամայականը մնացել է անփոփոխ: Այժմ ևս, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը համոզված է, որ ՀՀ-ԵՄ միջև ՀԸԳՀ իրականացումը պետք է կառուցվի բացառապես այս սկզբունքների վրա: Փաստահեն և պատճառաբանված մշտադիտարկումն ու դիրքորոշումների հայտնումը պետք է հիմնվի ԵՄ-ի հետ համագործակցության գերակա ոլորտներում առկա խնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունների վրա:

Ներկայացված դիրքորոշմանը համաձայն՝

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանը հայտարարում է՝

2021թ. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի զարգացման հրամայականը ներառում է հետևյալ գերակա ոլորտների ու խնդիրների նորովի գնահատում և, դրանից ելնելով, բարեփոխումների իրականացման նոր մոտեցումներ և առաջարկներ: Այդ ոլորտներն ու խնդիրները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալներով՝

- *Արտաքին քաղաքականության ենթատեքստում՝ միջազգային մշտադիտարկման և անվտանգության երաշխավորման վերաբերյալ իրավական դաշտի ու գործունեության արդյունավետ ապահովումը, պետական ինստիտուտների զարգացման ու գործառույթների գնահատումը, միջգերատեսչական հաղորդակցման մեխանիզմների արդյունավետության գնահատումը:*

- *Պետական տարբեր կառույցների միջև հակակշիռների ու փոխզսպումների մեխանիզմների, պետական մարմինների հաշվետվողականության, այլ բարեփոխումների և դրանց գնահատման վերաբերյալ խնդիրներ:*

- *Դատաիրավական բարեփոխումների իրականացման գործընթացը, դատական, քննչական և դատախազության մարմինների, Բարձրագույն դատական խորհրդի, դատավորների անաչառ, անկախ ու արդյունավետ գործունեությանն ուղղված օրենսդրական ու այլ անհրաժեշտ մեխանիզմների ապահովումը:*

- *Մարդու իրավունքների ազգային ռազմավարության իրականացման, սահմանամերձ բնակավայրերում մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության, խտրականության ու հիմնարար ազատությունների ենթատեքստում՝ սոցիալական արդարության, արդարադատության մատչելիության, արդար դատավարության ու պետական անվտանգության համատեքստում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ խնդիրներ:*

- *Մարդու իրավունքների և օրենքի գերակայության սկզբունքների իրականացման ենթատեքստում՝ հանրային առողջապահության համակարգի արդյունավետության վերաբերյալ խնդիրներ, աշխատանքի ու սոցիալական հարցերի և այլ նախարարությունների գործունեության արդյունավետությունը և այլ խնդիրներ՝ որպես արձագանք Կովիդ 19-ին և հումանիտար իրավիճակին պատերազմից հետո:*

- *Սոցիալական արդարության, որակյալ կրթության հասանելիության ու մատչելիության, որակի գնահատման և ապահովման, բարեվարքության ու ինստիտուցիոնալ ինքնավարության սկզբունքների ենթատեքստում կրթության համակարգի գործունեության արդյունավետությունը և անհրաժեշտ բարեփոխումները:*

- *Կառավարման հաշվետվողականության, թափանցիկության ու կոռուպցիայի կանխարգելման ենթատեքստում՝ հակակոռուպցիոն բարեփոխումների, հակակոռուպցիոն մարմինների, պետական գնումների համակարգի, միջոցների հայտարարագրման, իրական սեփականատերերի, ապօրինի հարստացման, շահերի բախման, ազդարարի պաշտպանության վերաբերյալ խնդիրները:*

- *Տեղեկատվական անվտանգության ու հասարակության վրա տեխնոլոգիաների ազդեցության ենթատեքստում՝ ապատեղեկատվական ու քարոզչական մեխանիզմների, կողմնակալ խոսույթների հանրային տարածքներ ներթափանցումը, քննադատական մտածողության զարգացման, կեղծ լուրերի ու տեղեկատվական հոսքերի, փաստերի ստուգման մեթոդների բացահայտումը և այլն:*

- *Կլիմայի փոփոխության, վերականգնողական էներգիայի, շրջակա միջավայրի պաշտպանության ու կայուն զարգացման, էներգետիկ անվտանգության ոլորտների վերաբերյալ խնդիրներ, ինչպես նաև ՀՀ-ԵՄ միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով պայմանավորված գերակայություններից բխող առաջնային ուշադրության արժանի այլ խնդիրներ:*

Դիմորդներից ակնկալվում է վերը նշված և այլ ոլորտներում Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների շրջանակում կոնկրետ խնդիրների բացահայտում և ձևակերպում, դրանց շուրջ հետազոտության իրականացում, այդ հետազոտության հիման վրա քաղաքականության մշակում, լուծումների առաջարկում և դրանց հանրայնացում: Հետազոտողներից ակնկալվում է կիրառել պատշաճ մեթոդաբանական գործիքներ և ներկայացնել ապացույցների վրա հիմնված եզրակացություններ ու առաջարկներ: Ուսումնասիրության արդյունքում ակնկալվում է, որ հետազոտողները ներկայացնեն պարզ, իրագործելի ու թիրախավորված առաջարկներով հանրային քաղաքականության հետազոտության փաստաթուղթ ու վերլուծության համառոտագիր: Հետազոտողները կստանան անհատական դրամաշնորհներ մինչև $3,500 (ԱՄՆ դոլար) հետազոտության ծախսերը հոգալու նպատակով: Հետազոտական ծրագրերի առավելագույն տևողությունն է չորս ամիս:

Հայտերի ներկայացման ընթացակարգ

Հայտերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով: Դիմորդները պետք է լրացնեն ծրագրի ներկայացման ու գնահատման համար նախատեսված հանրային քաղաքականության հետազոտությունների 2021թ. հայտի ձևը: Բոլոր դիմորդները կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին՝ հայտը ներկայացնելու վերջնաժամկետից վեց շաբաթից սկսած: Առաջին փուլն անցած դիմորդները հնարավոր է հրավիրվեն հարցազրույցի: Հետաքրքրված անձինք պետք է պարտադիր ներկայացնեն հետազոտության առաջարկների հայտը, համառոտ ինքնակենսագրություն (CV), ինչպես նաև նախկինում իրականացրած հետազոտության նմուշ/ներ կամ դրանց հղումները: Բոլոր փաստաթղթերը պետք է ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝

REGISTER@OSI.AM

մինչև 2021թ. օգոստոսի 16-ը, ժամը 17:00-ը

Հայտը ուղարկելուց հետո, մինչև երկու աշխատանքային օրերի ընթացքում դիմորդները կստանան հաստատող նամակ հայտի ստացման վերաբերյալ: Նամակը չստանալու դեպքում, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ: Վերջնաժամկետից հետո ստացված հայտերը չեն դիտարկվում: Հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի քաղաքացիական հասարակության ծրագրի համակարգող Վալենտինա Գևորգյանին՝ valentina@osi.am հասցեով: